

ԶՈՐՄ ԳԻՒՂԵՐ ԵՏ ԱՌՆՈՒԵՑԱՆ

ԹՈՒՐԲ ԼՐԱԳՐՈՂԻՆ ԹԵԼԱԴՐԱՆՔԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Իրան կրնայ կարգ մը միջոցառումներու զիմեյ ու ատույ խախտել չըջանի արդէն փափուկ հաւասարակշիւութիւնը:

Այդքի նախադասին ուղղուած երկրորդ թելադրանքը կը վերաբերի Ղարաբաղի բախումներուն: Մամուլը պարբերաբար կ'արձագանգէ Էլչիպէյի կարգ մը արտաստուածութիւններուն, որոնց համաձայն թուրք զինուորականներ կը մարզեն Ազրբեջանի բանակը կամ կը դառնան Ղարաբաղի մէջ: «Արեւմուտքի մամուլին մէջ արդէն իսկ այս մասին գրութիւններ լոյս տեսան» կը գրէ Պիրանտ ու կը շարունակէ. «Օրէ օր միջազգային հանրային կարծիքին մէջ կը տիրէ այն պատկերը քէ մահմետական թուրքերը Բրիտանիայի Հայերու դէմ պատերազմ կը մղեն»: Առանց վերապահութեան կատարուած նման յայտարարութիւններ, Պիրանտի կարծիքով, կրնան թուրքի մղել իրեն համար բողոքովին անբաղձաւ չըջանակի մը մէջ:

Յուլիս 20-ին, Երեւանէն մեր առած լուրերը կը հաստատեն որ ինքնապաշտպանութեան հայկական ուժերը ետ առած են չորս զիւղերը՝ Հաթիքը, Մեծչէն, Մազաւուզ, Մոխրաթաղ (Մարտակերտի շրջան): Մանով է որ Մարտակերտի անկումին ատեն, շրջանի բազմաթիւ զիւղեր ալ նոյն ճակատագրին ենթարկուած էին: Այս դործողութեան ընթացքին ըստ Ֆըրանսական ճայնասփիւռին, 88 ազերի զինեալ սպաննուած է եւ 50 ալ զերի ինկած, մինչ հայկական կողմը ութ մեռեալ եւ 30 վիրաւոր ունի:

Մ. Ալի Պիրանտ Ազրբեջանի ու Հայաստանի զարգացումներուն մօտէն հետեւած լրագրող մըն է: Ինք էր որ նախագահ ընտրուելուն վաղորդային, թրջական հեռատեսիլին համար Լ. Տէր-Պետրոսեանի հետ հարցազրոյց մը տեսագրած էր անցեալ Հոկտեմբերին. իսկ թուրք մամուլին իր աշխատակցութիւնը յաճախ կը չօշափէ Հայաստանի, Ղարաբաղի եւ Ազրբեջանի սուղնչուած հարցեր:

«Ստպաս» թերթէն արտատպելով «Միւլիյէթ» Յուլիս 19-ի թիւին մէջ տեղ կուտայ թուրք լրագրողին թելադրանքներուն որոնք ուղղուած են Ազրբեջանի նախագահ Էլչիպէյի:

Թուրքիոյ եւ Ազրբեջանի կապերուն ու անոնց սուղնչուող հայկական եզրին կանդրադառնայ նաեւ Յուլիս 20-ի «Հիւրըլէթ»-ին մէջ է: Էօզըթօք. ան կը գրէ թէ վերջերս Արտաքին նախարարութիւնէն կցորդ մը Բաքու այցելած է պատրաստելու քամար Էլչիպէյի թուրքիա կատարելիք պաշտօնական այցելութիւնը որ տեղի կ'ունենայ հաւանօքէն Սեպտեմբերին: Տնտեսական գործակցութեան համաձայնութիւններու հետ Ազրբեջանի ղեկավարութիւնը կը փափաքի «ստպաս-վութեան երկկողմանի համաձայնագիր» մըն ալ ստորագրել Անգարայի հետ արտիկա կը մեկնարանուի որպէս Ազրբեջանի հողային ամբողջականութեան թուրքիոյ նեցուկին ուղղուած խնդրանք մը: Էօզըթօք կը շեշտէ թէ թուրքիա այս մասին կողմնակից է աւելի լայնածաւալ համաձայնութեան մը որ ներառելով նաեւ Հայաստանն ու Վրաստանը, Կովկասի մէջ կայուն հաւասարակշիւութիւն մը պիտի ստեղծէ: Թուրքիա չի փափաքիր միջամուխ ըլլալ նախկին խորհրդային Հանրապետութիւններու միջեւ ծագած հարցերուն. այս պատճառով, թուրք կցորդը շատ փափկօքէն մերժած է երկկողմանի համաձայնութեան ազրբեջանական առաջարկը:

Ընդհանուր ձեւով Հայաստանի սահմանամերձ շրջանները հանդարտ են: Գնդակոծումները միշտ կը շարունակուին սակայն Կապանի վրայ: Հայերն ալ կը հակազդեն:

Պիրանտ որպէս իսկական ժողովրդավար, զազափարական ու անկեղծ խօսքի տէր ղեկավար մը ներկայացնել էտք այս վերջինը, հարկ կը տեսնէ զըռչացըններու կարգ մը հարցերու մասին անվերապահ արտայայտութիւններ ունենալէ: Անոնցմէ առաջինը Իրանի 12 միլիոն Ազերիներուն հետ միանալու հեռանկարն է զոր յաճախ կը կրկնէ Էլչիպէյ: Պիրանտ նշել է տք այս պարագան, հարց կու տայ. «Արդեօք կ'անդրադառնա՞ր քէ իր այս մօտեցումը Իրանի ինչ նեղուքիւն կը պատճառէ: Կրնա՞ր արդեօք ատոր գիմը նշգրտօքէն հաշուել»: Ապա կը բացատրէ. «Մեկ քրքան որ անհակադիտ կ'ըլլանք Հայաստանի հողային ֆօդարկուած երազանքէն ու մեր փաղափայտութիւնը ըստ այնմ կը նշդեմք, Իրան եւս նոյն վարմունքը պիտի ունենայ»: Պիրանտ Էլչիպէյի անկեղծութիւնը վրասնդաւոր կը նկատէ այն առումով որ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹԵԱՆ սնտուկին բացին զարման մը դտնելու համար, ի վերջոյ համաձայնութիւն մը գոյացաւ, բայց շատ կիսախտար: Արդարեւ 5-էն միայն 3 սենտիքաներ ստորագրեցին, Սէ -- Ժէ -- Թէ-ն բողոքովին մերժեց, ԷՅ -- Օ-ն ալ, «մտածենք» ըսաւ: Գոյացած համաձայնութիւնը այն է որ Օգոստոսը 1-էն 0,8%-ի յաւելում կայ սակերուն վրայ, որ կէս առ կէս պիտի վճարուի գործատիրոջ եւ աշխատողին կողմէ (0,4% իւրաքանչիւր): Նուազում պիտի կիրարկուի նաեւ գործադրութեան վճարումներուն, 8-էն 17%, ամէն չորս ամիսը, ըստ պարագաներու:

տեւորդներ: Պորսէլինօ 54 տարեկան էր, մտերիմ բարեկամը Փալընէի, 3 զաւակի հայր: Անգամ մը եւս մաֆիան ուզած է փաստել որ տէրն ու տիրականն է Սիկիլիոյ մէջ եւ այդ փսկ պատճառով մահափորձը այլ վայր մը չէ ըրած, ուր թէեւ աւելի ալ զիւրին էր: Ոմանց համոզումն այն է իտալիոյ մէջ, որ նման գործուսնէութիւն կը բացատրուի միայն մաֆիա -- Պետութիւն զազանի գործակցութեամբ -- Ետջորժափ կարելի չըլլայ անոր վերջ եւ ցորժափ կարելի չըլլար մաֆիային յաղթահարել:

1992-ի դարնան (7 միլիոն այր, 5 միլիոն կին, մէկ միլիոն երախայ): 1995-ի համար կը նախատեսուի որ այս թիւը 17 միլիոնի պիտի բարձրանայ:

ԶԵՆՈՍԼՈՎԱՔԻՈՅ Նախագահը՝ Վաչըլաւ Հաւէլ իր հրաժարականը տուաւ, իբրեւ հետեւանք երկրին զաջնակցային դրութեան ձախողութեան, քանի որ Սլոուաքիա իր ինքնիշխանութիւնը հռչակեց: Թատերագիր -- գրագէտը 30 ամիս է կը վարէր երկրին նախագահութիւնը (ընտրուած էր 1989, Դեկտեմբեր 29-ին): Ընդհանուր սպաւորութիւնն այն է որ Հաւէլի հրաժարականը վը նշէ արեւելեան Եւրոպայի ժողովրդավարացման երանութեան վախճանը: «Լիպտաւիան»-ի մէջ, Վերոնիք Սուլիէ զիպուկ նկատողութիւն մը կ'ընէր Շարաթ օր (Յուլիս 18) գրելով. -- «Մարդը (Հաւէլ) որ վանսէպասի պատըզգամէն կը խոստանար «սէրն ու ճշմարտութիւնը պիտի յաղթեն ատելութեան եւ սուտին» հաւանաբար գոհ գնաց իր իսկ պատրանքներուն, պատրանքներ տրամարանական աշխարհի մը, ուր պատնառարանութիւններ կը լսուին եւ ուր մարդ կը կռուի արժէքներու եւ ոչ թէ պաշտօններու համար»:

ԱՄՍԹԵՐՏԱՄԻ մէջ, Յուլիս 19-ին բացւեցաւ ՍԻՏԱՅի նուիրուած ութերորդ համագումարը: Սկզբունքով այս ժողովը Պոսթըն տեղի պէտք է ունենար, բայց Միացեալ -- Նահանգներու պարտադրած արդելքները ՍԻՏԱ-է վարակուածներու մուտքին երկրին մէջ, պատճառ եղած էին որ վայրը փոխուի: 133 երկիրներէն 11 հազար մասնակցող կը ժամանէր Ամսթերտամ: Ժողովին լողունդն է՝ «Միացած աշխարհ մը ՍԻՏԱ-ին դէմ», բայց, կացութիւնը աւելի քան մտահոգիչ է, քանի հիւանդութիւնը հակաթափաղ կը տարածուի եւ անոր դէմ տարուած պայքարն ալ տեղաթափ կ'ընէ: Վերջին տասը տարիներու ընթացքին համաճարակը հարիւրով բազմապատկուած է, 1981-ի հարիւր հազարէն անցնելով 13 միլիոնի

ԻՍՐԱԵԼԻ Նախագահը՝ Հէրզոկ անձնական բնոյթ ունեցող 48 ժամուան այցելութիւն մը կատարած է Պոլիս, ապահովութեան ուժերու խիստ հակողութեան տակ: Ընդունուած է իր պաշտօնակցին՝ Խօզալի կողմէ: Ձնջուած է գրօսաչըլիկական այն շրջապատը զոր Հէրզոկ պիտի ընէր «ստպասութեան պատճառներով»: «Իսրայէլի Նախագահի մը առաջին այցելութիւնն էր թուրքիա: Դրդապատճառն էր՝ Օսմանեան կայսրութեան կողմէ սեֆարատ Հրեաներու ընդունման 500-ամեակին ողբերգութիւնը: Եօթը հողի ձերբակալուած են իսրայէլեան օդանաւային զրասենեակին՝ ԷԼ -- ԱԼ-ի դէմ 100 ծայրայեղ մահմետականներու յարձակման աւարտին:

ՓԱԼԵՐՄՈՅԻ մէջ, Կիրակի օր, Յուլիս 19-ին, սպաննուեցաւ գատաւոր մը եւս, անոր պիտի յաջորդէր Փալընէի (սպաննուած հագիւ երկու ամիս առաջ) եւ շարունակէր անոր անխնայ սպաքարը մարտիկներին դէմ: Բայց, Փառլօ Պորսէլինօ Վրցաւ իսկ գործի ձեռնարկել, ամենաչօք մաֆիան, ճիշդ նոյն ձեւով, պայքար մատուցում ու հանել տուաւ դատաւորին հետ:

ՌՈՒՍՍԱՍՏԱՆԻ զաջնակցային Հանրապետութեան Խորհրդարանը վերջին նիստին, արձակուրդներու ընդհատումէն առաջ, որոշեց իր ձեռքն առնել «Իզլետիլա» օրաթերթը (թեր' 136, դէմ 23, 12 ձեռքնպահ): Ելցին կը խոստանայ հակազդել այս որոշումին դէմ, որ կը ձգտի սանձել երկկողման այս կարեւոր օրաթերթը, որ անկախութիւն հռչակած էր 1991 Օգոստոս 23-ին: